ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆՅՈՒԹ

HPV պատվաստանյութ Gardasil®

Ինչ է անհրաժեշտ ձեզ իմանալ (Մարդկային պապիլոմավիրուս)

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են իսպաներենով և այլ լեզուներով: Տե՛ս www.immunize.org/vis կայքը

1 Ի՞նչ է HPV-ն:

Սեռական **մարդկային պապիլոմավիրուսն (HPV)** սեռական ճանապարհով փոխանցվող ամենատարածված վիրուսն է Միացյալ Նահանգներում: Իրենց կյանքի ընթացքում սեռականորեն ակտիվ տղամարդկանց և կանանց կեսից ավելին վարակվում են HPV-ով:

Մոտ 20 միլիոն ամերիկացի ներկայումս վարակված է, ևս մոտ 6 միլիոն վարակվում է յուրաքանչյուր տարի: HPV-ն սովորաբար փոխանցվում է սեռական շփման ճանապարհով:

HPV վարակների մեծ մասը չունեն ախտանիշներ, և դրանք ոչնչանում են ինքնուրույն: Սակայն HPV-ն կարող է առաջացնել **արգանդի պարանոցի քաղցկեղ** կանանց մոտ: Արգանդի պարանոցի քաղցկեղը աշխարհով մեկ կանանց շրջանում քաղցկեղից մահացության երկրորդ հիմնական պատճառն է: Միացյալ Նահանգներում տարեկան մոտ 12.000 կին ձեռք է բերում արգանդի պարանոցի քաղցկեղ, և մոտ 4000-ն ակնկալվում է, որ պետք է մահանան:

HPV նաև կապված է մի քանի պակաս տարածված քաղցկեղերի հետ, ինչպիսիք են՝ կանանց հեշտոցային եւ սեռական օրգանի, հետանցքային և բերանակոկորդային (կոկորդի հետին մասը, այդ թվում՝ լեզվի հիմքը և նշագեղձերը) քաղցկեղները՝ և՛ կանանց, և՛ տղամարդկանց մոտ: HPV-ն կարող է սեռական օրգանների և բերանի գորտնուկների պատճառ հանդիսանալ:

HPV վիրուսը բուժում չունի, բայց դրա հետևանքով առաջացած որոշ խնդիրներ կարող են բուժվել:

2 HPV պատվաստանյութ՝ Ինչու՞ պատվաստվել:

HPV պատվաստանյութը, որն ստանում եք, այն երկու պատվաստանյութերից մեկն է, որ կարելի է տալ՝ HPV–ն կանխելու համար: Այն կարելի է տալ և՛ տղամարդկանց, և՛ կանանց:

Այս պատվաստանյութը, եթե տրվի նախքան վիրուսի ազդեցությունը, կարող է կանխել կանանց մոտ արգանդի վզիկի քաղցկեղի դեպքերի մեծ մասը: Բացի այդ, այն կարող է կանխել հեշտոցային և սեռական օրգանների քաղցկեղը կանանց մոտ, ինչպես նաև սեռական գորտնուկները և հետանցքային քաղցկեղը տղամարդկանց և կանանց մոտ:

Ենթադրվում է, որ HPV պատվաստանյութը տնական ազդեցության կունենա: Սակայն պատվաստումը չի կարող փոխարինել արգանդի վզիկի քաղցկեղի սքրինինգին: Կանայք միևնույն է պետք է կանոնավոր կերպով հանձնեն Պապ թեստերը:

3 Ո՞վ պետք է ստանա այս HPV պատվաստանյութը և ե՞րբ:

HPV պատվաստանյութը տրվում է 3 դեղաչափային շարքով:

1-ին Դեղաչափը	Այժմ
2-րդ Դեղաչափը	Առաջին Դեղաչափից հետո՝ 1-ից 2 ամիսների ընթացքում:
3-րդ Դեղաչափը	Առաջին Դեղաչափից հետո՝ 6 ամիս անց

Էրացուցիչ (խթանող) դեղաչափեր խորհուրդ չի տրվում:

Ընթացիկ պատվաստում

- Այս HPV պատվաստանյութը խորհուրդ է տրվում **11-12 տարեկան** աղջիկներին և տղաներին: Այն *կարող* է տրվել 9 տարեկանից սկսած:

Ինչու՞ է HPV պատվաստումը խորհուրդ տրվում 11 կամ 12 տարեկաններին:
HPV վարակը հեշտ է ձեռք բերել, նույնիսկ մեկ սեռական զուգընկերոջ հետ: Այդ պատճառով է կարևոր ստանալ HPV պատվաստումը՝ նախքան սեռական հարաբերություն ունենալը: Բացի այդ, արձագանքը պատվաստանյութին ավելի լավ է այս տարիքում, քան ավելի մեծ տարիքում:

Էրացնող պատվաստում
Այս պատվաստանյութը խորհուրդ է տրվում այն մարդկանց, ովքեր չեն ավարտել 3 դեղաչափային շարքը՝

- 13-26 տարեկան կանայք:
- 13-21 տարեկան տղամարդիկ:

Այս պատվաստանյութը *կարելի* է տալ 22-ից 26 տարեկան այն տղամարդկանց, ովքեր չեն ավարտել 3 դեղաչափային շարքը:

Այն *խորհուրդ է տրվում* մինչև 26 տարեկան այն տղամարդկանց, ում իմունային համակարգը ՄԻԱՎ վարակի, կամ այլ հիվանդության կամ դեղորայքի պատճառով թուլացել է:

HPV պատվաստանյութը կարելի է տալ այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ:

U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

4 Որոշ մարդիկ չպետք է ստանան HPV պատվաստանյութը կամ պետք է սպասեն:

- HPV պատվաստանյութն արգելվում է տալ նրանց, ովքեր թեկուզ մեկ անգամ կյանքին սպառնացող ալերգիկ ռեակցիա են ունեցել այս պատվաստանյութի որևէ բաղադրիչի նկատմամբ: Հայտնեք ձեր բժշկին, եթե պատվաստվող անձը ունի սուր ալերգիա՝ ներառյալ ալերգիա սնկերի նկատմամբ:
- HPV պատվաստանյութը խորհուրդ չի տրվում հղի կանանց: Սակայն հղի վիճակում HPV պատվաստանյութն ստանալը չի կարող հղիության ընդհատման պատճառ հանդիսանալ: Կրծքով կերակրող կանայք կարող են ստանալ պատվաստանյութը:
- Թեթև աստիճանի հիվանդները, եթե ունեն HPV պատվաստման ցուցում, կարող են պատվաստվել: Չափավոր կամ ծանր հիվանդները պետք է սպասեն մինչև իրենց վիճակի բարելավումը:

5 Որո՞նք են այս պատվաստանյութի ռիսկերը:

HPV պատվաստանյութը շուրջ վեց տարի գործածության մեջ է եղել Միացյալ Նահանգներում ու աշխարհով մեկ և շատ ապահով է:

Ինչևէ, ցանկացած դեղորայք կարող է լուրջ խնդրի պատճառ հանդիսանալ, ինչպես, օրինակ՝ սուր ալերգիկ ռեակցիան: Ցանկացած պատվաստանյութի՝ լուրջ փասվածքի կամ մահվան հանգեցնելու հավանականությունը չափազանց քիչ է:

Պատվաստանյութերի հետևանքով կյանքին սպառնացող ալերգիկ ռեակցիաները շատ հազվադեպ են: Եթե նման բան պատահի, դա կարող է տեղի ունենալ պատվաստումից հետո մի քանի րոպեի կամ մի քանի ժամվա ընթացքում:

Որոշ **մեղմից չափավոր** խնդիրներ են հայտնի՝ կապված այս HPV պատվաստանյութի հետ: Դրանք երկար չեն տևում և վերանում են ինքնուրույն:

- Ռեակցիաներ ձեռքի ներարկված հատվածում
  - Ցավ (մոտավորապես 10-ից 8 անձի մոտ)
  - Կարմրածություն կամ այտուցվածություն (4-ից 1 անձի մոտ)
- Տենդ
  - Մեղմ (100° F) (մոտավորապես 10-ից 1-ը)
  - Չափավոր (102° F) (մոտավորապես 65-ից 1 անձի մոտ)
- Այլ խնդիրներ՝
  - Գլխացավ (մոտավորապես 3-ից 1 անձի մոտ)
- Ուշաթափություն. Կարճաժամկետ ուշաթափության և դրա հետ կապ ունեցող նոպաներ (ինչպես, օրինակ՝ թափահարող շարժումներ) կարող են պատահել բուժգործողությունից հետո՝ ներառյալ պատվաստումը: Պատվաստումից հետո մոտ 15 րոպե նստելը կամ պառկելը կկանխի ուշաթափությունը և վայր ընկնելու հետևանքով առաջացած փասվածքները: Հայտնեք ձեր բժշկին, եթե հիվանդն ունի թեթև գլխապտույտ կամ տեսողության փոփոխություն կամ զնգոց ականջներում:

Բոլոր պատվաստանյութերի նման, կշարունակվի HPV պատվաստանյութերի վերահսկողությունը՝ անսովոր կամ սուր խնդիրների բացահայտման նկատառումներով:

DCH–1339A

Translation provided by the Immunization Action Coalition

6 Ի՞նչ տեղի կունենա լուրջ ռեակցիայի առկայության դեպքում:

Ի՞նչ պետք է ես փնտրեմ:

- Փնտրել՝ ցանկացած բան, որ ձեզ է վերաբերում, ինչպես, օրինակ՝ սուր ալերգիկ ռեակցիայի նշաններ, շատ բարձր ջերմություն, փոփոխություններ վարքագծում:

  Սուր ալերգիկ ռեակցիաների նշանները կարող են ներառել ցան, դեմքի և կոկորդի այտուցվածություն, դժվար շնչառություն, արագ սրտխփոց, գլխապտույտ և թուլություն: Դրանք կարող են սկսվել պատվաստումից հետո՝ մի քանի րոպե կամ մի քանի ժամ անց:

Ի՞նչ պետք է ես անեմ:

- Եթե դուք կարծում եք, որ դա սուր ալերգիկ ռեակցիա է կամ այլ անհետաձգելի դեպք, զանգահարեք 9-1-1 կամ տեղափոխեք տվյալ անձին մոտակա հիվանդանոց: Այլապես՝ բժիշկ կանչեք:
- Այնուհետև ռեակցիայի մասին պետք է զեկուցել Vaccine Adverse Event Reporting System (VAERS): Ձեր բժիշկը կարող է գրանցել այս զեկույցը, կամ դուք դուք կարող եք ինքներդ էլ անել VAERS վեբ կայքի միջոցով՝ **www.vaers.hhs.gov**, կամ զանգահարելով՝ **1-800-822-7967** հեռախոսահամարով:

VAERS-ը նախատեսված է միայն ռեակցիաների մասին զեկուցելու համար: Նրանք բժշկական խորհրդատվություն չեն տրամադրում:

7 The National Vaccine Injury Compensation ծրագիր

National Vaccine Injury Compensation ծրագիրը (VICP) դաշնային ծրագիր է, որը կոչված է փոխհատուցելու որոշակի պատվաստանյութերից տուժած մարդկանց:

Մարդիկ, ովքեր կարծում են, որ փասվել են պատվաստանյութից, կարող են իրազեկվել ծրագրի մասին և բողոք ներկայացնելու մասին՝ զանգահարելով **1-800-338-2382** կամ այցելելով VICP **www.hrsa.gov/vaccinecompensation** կայք:

8 Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Հարցրեք ձեր բժշկին: 1–888–767–4687
- Զանգահարեք ձեր տեղական կան նահանգային առողջապահական բաժանմունք:
- Կապվեք Հիվանդության վերահսկման և կանխարգելման կենտրոնների հետ (CDC):
  - Զանգահարեք **1-800-232-4636** հեռախոսահամարով (**1-800-CDC-INFO**) կամ
  - Այցելեք CDC-ի կայք հետևյալ հասցեով՝ **www.cdc.gov/vaccines**

AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.

Vaccine Information Statement (Interim)

HPV Vaccine (Gardasil)

5/17/2013 Armenian

Office Use Only

42 U.S.C. § 300aa-26

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: